# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# N ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17-2
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

26.05.2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Տ. Ենոքյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Սամվել Չիթչյան>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Քիրիշյանի (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 07.04.2026թ.-ին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17-2 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17-2 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011046373**
**ՀՎՀՀ 02882913**
**հեռ. 010 59-68-57**
**էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

Տ. Ենոքյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**<<Սամվել Չիթչյան>> ՍՊԸ**
**ք. Երևան, Ազատության 24**
**Հ/Հ՝ 2050822126921001**
**ՀՎՀՀ 01075852**
**հեռ. 094 82-55-13**
**էլ. Հասցե՝ yelena.ghalayan@gmail.com**

Ա. Քիրիշյան
/տնօրեն/
(ստորագրություն) Կ.Տ